



ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
PUBLIC COUNCIL OF RA
ОБЩЕСТВЕННЫЙ СОВЕТ РА

ՆԱՅԱՍՏԱԿԻ ՆԱԽԱՂԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Բուզանդի 3, 0010, Երևան, / 3 Buzand St., 0010 Yerevan / Ул. Бузанда 3, 0010, Ереван, Հեռ. /Tel./Tel: (010) 515619

№ 25.05.2021-Ե-38

«25» «մայիսի» 2021թ.

Պարոն Նիկոլ Փաշինյանին,
ՀՀ վարչապետ

Մեծարգո՝ պարոն Վարչապետ,

Ս.թ. հունիսի 20-ին նշանակված Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին մասնակցելու կապակցությամբ իմ կայացրած որոշմամբ պայմանավորված՝ խնդրում եմ ընդունել Հանրային խորհրդի նախագահի պաշտոնից և ՀԽ անդամությունից իմ հրաժարականի դիմումը, քանի որ քաղաքական թիմի կազմում ներգրավվածությունս հակասելու է Հանրային խորհրդի մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին (Հանրային խորհրդի անդամն իր գործունեության ընթացքում քաղաքական հարցերում պարտավոր է պահպանել չեզոքություն):

Շնորհակալություն եմ հայտնում ՀՀ Հանրային խորհրդի կազմում ինձ առաջադրելու, ապան՝ նախագահի պաշտոնում կառավարության և Ձեր ցուցաբերած վստահության ու նշանակման համար: Հայաստանի Հանրապետության, մեր հասարակության և ժողովրդի համար բախտորոշ և բարդագույն տարում՝ 2020թ. ընթացքում և հետո, չնայած հայտարարված արտակարգ և ռազմական դրության ռեժիմներով պայմանավորված սահմանափակումներին ու հետպատերազմյա իրավիճակին, իմ գործընկերների հետ փորձել եմ առավելագույնն անել խորհրդատվական առաջարկությունների շրջանակում ամենատարբեր բնագավառներում վերհանված հանրային շահն ու դրանց առնչվող խնդիրները, պետության համար ուշագրավ նախագծերը և գաղափարները կառավարության տարբեր մարմիններին հասցնելու համար:

Շնորհակալություն եմ հայտնում Ձեզ և բոլորին համատեղ աշխատանքի, իսկ մեր հանրությանը և քաղաքացիական հասարակությանը՝ համագործակցության և կառույցի գործունեության հանդեպ ցուցաբերած մեծ ուշադրության ու համագործակցության համար:

Հարգանքով՝

ՀՀ Հանրային խորհրդի նախագահ

Ստյոպա Սաֆարյան